ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

THE GENERAL DEPARTMENT OF LOGISTIC
SUPPORT OF MINISTRY OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA
ГЛАВНОЕ УПРАВЛЕНИЕ МАТЕРИАЛЬНО-
ТЕХНИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ
МИНСТЕРСТВА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք.Երևան, Բագրևանդի փ.5
E-mail: depart@mil.am
Հեռ.՝ (+374 10) 29-43-97

5 Bagrevand str., 0044 Yerevan
Ереван, 0044, Багреванда 5,
E-mail: depart@mil.am
Tel.Тел. (+374 10) 29-43-97

№ Բաաի/2/5Շ
«26» 05 2020 թ.

«Ռուսնեֆտգազ Տրեյդինգ» ՍՊԸ (ՀՎՀՀ 7728311244)
գլխավոր տնօրեն Պ. Բուրավցովին
հասցե՝ ք. Մոսկվա, ՈՒռժումսկայա փ., տուն 7. սենյակ 32, օֆիս 10
էլ. հասցե՝ leprikon1@yandex.ru

Համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության և «Ռուսնեֆտգազ Տրեյդինգ» ՍՊԸ-ի միջև 01.02.2020թ. կնքված N ԲՄԱՊՁԲ-20-7/4-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր)՝ 2020թ. ընթացքում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում ընկերությունը պարտավորվել է ՀՀ ՊՆ կարիքների համար մատակարարել շարժիչի յուղեր /Մ-16ԻԽՊ-3/:

2020թ. ՀՀ ՊՆ կարիքների համար անհրաժեշտ շարժիչի յուղերի /Մ-16ԻԽՊ-3/ գնման նպատակով «Ռուսնեֆտգազ Տրեյդինգ» ՍՊԸ-ին ապրիլի 23-ին պատշաճ ծանուցվել է N ԲՄԱՊՁԲ-20-7/4-1 գնման պայմանագրին կից համաձայնագիր կնքելու և 2020թ. մատակարարումները ըստ կնքվելիք համաձայնագրի կազմակերպելու նպատակով, սակայն «Ռուսնեֆտգազ Տրեյդինգ» ՍՊԸ-ն Պայմանագրի 8.13 կետով սահմանված ժամկետում չի ստորագրել համաձայնագիրը:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 8.13 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. մայիսի 25-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է N ԲՄԱՊՁԲ-20-7/4-1 գնման պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Ռուսնեֆտգազ Տրեյդինգ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին փոխանցել 14 470 000 ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի ընդհանուր գումարի 10 %-ը):

Միաժամանակ, ի պատասխան Ձեր 12.05.2020թ. թիվ 52 գրության, հայտնում եմ, որ ՀՀ-ում գործող օրենսդրության համաձայն ԱԱՀ-ն, ակցիզային հարկը, բնապահպանական վճարը ենթակա են վճարման ՀՀ պետական բյուջե, որը վճարվում է Գնորդի կողմից՝ Վաճառողին վճարվող գումարներից հաշվանցելու միջոցով և որոնք ներառված են Պայմանագրի 3.1 կետում:

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
Ն. ՅՈԼՉՅԱՆ